Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

մաթեմատիկայի /5 ժամ/, աշխարհագրության /6 ժամ/, ԹԳՀԳ-ի /5 ժամ/, կերպարվեստի /3.5 ժամ/, տեխնոլոգիայի /2 ժամ/, երաժշտության /3,5 ժամ/, զինղեկի /2 ժամ/, քիմիայի /6 ժամ/, կենսաբանության /6 ժամ/, անգլերենի /16 ժամ/, դասվարի ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) և բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 09.09.2025թ. մինչև 22.09.2025թ.-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14^{00}-ին**, Սյունիքի մարզի Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077)05.10.77 կամ (0285)2.47.90 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1
Հեռ.՝ (աշխ.) (0285) 2 47 90
(բջջ.) (077) 05 10 77